

1700

171  
P-37

1894

ԹԵ ԻՆՉ ԸՍՈՒ

ԳԻՂՈՆ ՍՊԱՐՏԱ.ՑԻՆ

200

معارف عمومیه نظارت جلیل اسنک ۱۲ شوال ۳۱۱ و ۶  
نیسان ۳۱۰ تاریخی و ۲۳ نومروں رخصت‌نمہ سیله  
نشر اولن‌شدر

مصارف آمریقان مسیو ز شرکتی طرفدن تسویه اولن‌رق  
طبع اولن‌شدر

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼԻՑ

Խ. Տ. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.

94

2010

30906-42

171  
թ-37  
ար

ԹԵ ԻՆՉ ՀՍԱՒ

ՔԻՂՈՆ ՍՊԱՐՏԱՑԻՆ

\*\*\*\*\*

Ծերունին Անդրէսա կը սիրէր իւր ուն-  
կընդիրներուն հետաքրքրութիւնը սրել, եւ  
զայս կ'ընէր յաճախս առաւօտուն խանու-  
թին դրան վրայ իւր յաջորդ ձառին բնա-  
բանին միայն մէկ մասը գրելով։ Առառու մը  
մինչ իւր խանութիւն առջեւէն կ'անցնէինք,  
դիտեցինք որ կաւիճով գրեր էր

«ՄՏԱԾԿ»

բառը, որ մէկ առմամբ ազդեցութենէ  
զուրկ չէր։ Մեղ շատ մտածել տուաւ  
այդ, որովհետեւ քիչ առաջ եւ երբեմն  
մեծ յաջողութեամբ այսպիսի միակ բա-  
ռերէ գուշակութիւններ ըրած էինք թէ  
արդեօք ի՞նչ պիտի ըլլար ծերունւոյն ամ-  
բողջ բնաբանը։ սա էր հրահանգիչ վար-  
ժութիւն մը, որովհետեւ մեզ կը ծանու-  
թացունէր առակի կարգ անցած շատ մը  
պատուական իմաստուն ասացուածներ։

(5206-50)

14058-58



Այս առմիւ գործը դիւրացած էր, որով հետեւ առաջին առաջին բառը այս զըրուածն էր, եւ նախընթաց առածէն պատրաստուած էինք ներկայ ասացուածը զըրունել Յունաստանի եօթն իմաստնոց ասացուածներուն մէջ: Կէս օրէն ետքը տեսանք թէ ուղիղ էր մեր կարծիքը, վասն զի Քիղոնի առածը գրուած էր ամբողջ,

«ՎԱԽՃԱՆՔ ՄՏԱԾՔ»

«Հոս գտնուած ամէն բան, » ըսաւ ծերունին Անդրէաս մինչ իւր ունկնդիրներն անոր խանութին առջեւ հաւաքուած էին, «հոս գտնուած ամէն բան կը վերջանայ: Մինչեւ իսկ ամենէն լաւ շինուած կօշիկները այնչափ կը հիննան որ անկարելի կ'ըլլայ զանոնք նորոգել, » ըսաւ ծիծաղաշրժ ժպիտով մը, մինչ վար կը նետէր հին կօշիկ մը որ այնչափ մաշած եւ պատառ պատառ եղած էր, որ հնակարկատին կարողութենէն վեր էր զայն նորոգել: «Այո, » շարունակեց, «եւ նոյն ինքն ծեր հնակարկալը երթալով նոյն բաղդը պիտի ունենայ, որովհետեւ աշխարհիս վրայ մարդկային կեանքը շուտով կը վերջանայ: Այս փոփոխութեանց աշխարհ մըն է: Եթէ նայիմ նստած տեղէս փողոցին այն կողմը

զոր կը տեսնեմ ասկէ, շատ մը փոփոխութիւններ կրնամ միտքս ըերել: Կը յիշեմ մանկութիւններ որ զործերու վերջ տուին, եւ մահեր որ տուններ քայքայեցին, եւ մտազրութիւններ որ չգործադրուեցան. եւ զրեթէ անհամար տեղափոխութիւններ: Անխուսափելի է այս, որովհետեւ հոս ամէն բան ունի իւր սկիզբն եւ վախճանը:

«Տախտակին վրայ գտնուած առածք զրող իմաստունը սա զաղափարն ունէր թէ մարդիկ պարտին ամէն բանի վախճանը մտածել: Անոր ասացուածը իւր մէջ շատ բան կրնայ բովանդակել, վասն զի կրնայ ակնարկել գործի մը կատարումը, կամ արարքի մը արդիւնքը, կամ սովորութեան մը ելքը, կամ սակարկութեան մը հետեւանքը, եւ անշուշտ պէտք է հասկնանք թէ կը պարունակէ նաեւ աշխարհիս վրայ մեր կենաց վախճանը:

«Ես միշտ չէի հնակարկատ: Էր ժամանակ երբ կօշիկներ շինել էր զիխաւոր գործս, բայց հնարքները եւ մեքենաները ձեռքով շինուած կօշիկներուն վերջ տուին: Սակայն եւ այնպէս, լաւ կը յիշեմ որ առանց կանխաւ լաւ մը մտածելու երբեք

զոյգ մը կօշիկ չշինեցի : Ամենեւին չէի ուղեր հարեւանցի կամ բաղդին թողլով շինել զանոնք : Միշտ առաջ կը մտածէի եւ սկսած ատենս կ'որոշէի թէ ի՞նչ տեսակ կամ ի՞նչ մեծութեամբ կօշիկ պիտի շինէի . ճշգրիտ չափեր կ'առնէի , եւ խնամով կ'ընտրէի ձեռքիս գործին տեսակին ամենէն յարմար նիւթերը , վասն զի ինչ որ տիկնող մը հողաթափին ամենէն յարմար էր , ամենեւին չէր գար գործաւորին կօշիկին :

«Աչկերտ ընկեր մը ունէի որ ինձմէ առաջ առանձին գործի սկսաւ , սակայն չյաջողեցաւ : Իւր գործերուն մեծ մասը յաճախորդներուն գոհացում չէր տար , եւ շատ ոտքի չյարմարող կօշիկներ ետ կը տրուէին : Ասոր միակ պատճառն էր անզգուշութիւն , մտածելու պակասութիւն , վասն զի ուրիշ կողմանէ էր լաւ աշխատաւոր մը : Շատ չանցած իւր գործը շահ չբերաւ , եւ որ մը խանութին փեղկերը գոցութեցան եւ խանութը ուրիշի վարձու տրուեցաւ : Եթէ մարդ մը կ'ուզէ իր գործը լաւ եւ յաջողութեամբ կատարել , առաջուց աղէկ մը մտածելու է թէ ի՞նչ պիտի ընէ եւ թէ ի՞նչպէս լաւագոյնս կրնայ ընել զայն : Լիովին վստահ եմ որ եթէ

մարդիկ խորհէին թէ ի՞նչ պիտի ըլլայ իրենց ներկայ ընթացքին հետեւանքը , յաճախ կործանումէ պիտի աղատուէին :

«Երիտասարդը երբ գէչ ընկերներ կ'ընտրէ , չմտածեր թէ ի՞նչ պիտի ըլլայ հետեւանքը : Հետեւանքն է միշտ մեղք եւ թշուառութիւն , յաճախ բանտ , երբեմն կախաղան : Զափահաս մարդը չմտածեր թէ ի՞նչ պիտի ըլլայ իւր արքեցութեան վախճանը : Շատ պարագայից մէջ անոր վախճանն է բողդոջոկան իւթշուրունէն եւ գինեմոլի մահ : Խանութպանին աշկերտը վախճանը չմտածեր երբ զրամարկղէն տասնոց մը կ'առնէ մարմարիոն գնտակ գնելու համար , կամ աւելի ետքը կէս մէճիտ՝ զրաւի մը վճարման համար : Վախճանը սակայն կը հասնի վերջապէս , որ է կործանում : Քիչ գեռատիներ անհոգութեան եւ ծուլութեան ունակութիւններ կազմած ատեն կը խորհին թէ անոնք ի՞նչ հետեւանք պիտի ունենան , եւ սակայն անոնք կենաց մէջ յաջողութեան ճամբան բոլորվին կը գոցեն . կամ եթէ մարդիկ միայն զիտնային թէ իրենց համար ի՞նչ թշուառութիւն կը պատրաստեն , յոոի բարուց տեղի տալով , կամ միշտ խոժոո եւ դժգոն

ըլլալով, ամշուշտ հիմակուընէ աւելի զգուշաւոր պիտի ըլլային, եւ պիտի ջանային կազմել խորհելու ունակութիւններ որ պիտի միտին կեանքը ոչ թէ դառնացունել, այլ քաղցրացունել :

«Մատածէ վախճանը, քու կենացդ վախճանը : Մարդ չուզեր մահուան վրայ խորհիլ : Համելի նիւթ մը չէ սա, ու շատերու շատ աւելի սոսկալի է խորհուրդը այն վիճակին որ պիտի յաջորդէ մահուան : Խնչու, ուրեմն, պարտիս անոր վրայ մըտածել : Որպէս զի անոր համար պատրաստուիս : Որպէս զի այնպիսի պատրաստութիւններ ընես որ մահը դադարի սոսկալի բան մը ըլլալէ, եւ մահէն անդին եղածը ոչ եւս միտքը լիցունէ անով : Սուրբ Գիրքը այս մասին շատերու զանցառութեան վրայ կ'ողբայ: Երանի՛ թէ իմաստուն ըլլային, ու աս բանը հասկընային եւ իրենց վախճանը մտածէին : » Յօր. լի. 29.

«Մահը ուշ կամ կանուխ ամենուս ալ կրնայ գալ, եւ չենք դիտեր թէ ե՛րք, վասն զի մահը ամէն հասակի մարդոց ալ կը հասնի : Դեռահասակներ, դուք տղաքներ եւ աղջիկներ, մտածած էք թէ օր մը սուրբ Աստուծոյ մը առջեւը պիտի ելլէք :

Դիտէք թէ այնպէս է . սակայն պատրաստութիւն ըրած էք անոր համար: Ընդունեցէք Տէր Յիսուս իբրեւ ձեր սիրող Փրկիչը, եւ պատրաստ պիտի ըլլաք վատահութեամբ զնա դիմաւորել, եթէ շատ չանցած զինք դիմաւորելու կանչուիք, կամ մահուան միջոցաւ կամ նորա գալստեամբ . կամ եթէ շուտ չկանչուիք, յայնժամ կարող պիտի ըլլաք իւր վառաց համար երկար եւ օպտակար կեանք մը վարել : Պատրածոտ էք Անոր համար ավրելու : Պատրածոտ էք զնա դիմաւորելու : »

Բոլորս ալ կեցած կը սպասէինք, կարծելով թէ ծերունին Անդրէաս ուրիշ բաներ ալ պիտի ըսէլ, բայց չըսաւ : Կօշիկ մը առնելով սկսաւ աշխատիլ մենք ցրուեցանք, մեր ականջներուն մէջ զգալով հընչիւնը սա հարցման, «Պատրածոտ էք զնա դիմաւորելու : »



154

1700

2018

xx5200

ՀՀ Ազգային գրադարան



NL0025777

